

Փոխըմբռնման Հուշագիր

**Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության
Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության և
Ֆրանսիական ատոմային և այլընտրանքային էներգիայի կոմիսարիատի
Շրջակա միջավայրի վերահսկողության և վերլուծության դեպարտամենտի
միջև
սեյսմիկ անվտանգության բնագավառում համագործակցության մասին**

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՍՊԱԾ) և Ֆրանսիական ատոմային և այլընտրանքային էներգիայի կոմիսարիատի Շրջակա միջավայրի վերահսկողության և վերլուծության դեպարտամենտը (այսուհետ՝ ՖԱԷԿ ՇՄՎՎԴ), այսուհետ՝ Կողմեր,

- հիմնվելով Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության ժողովուրդների միջև գոյություն ունեցող բարեկամական փոխհարաբերությունների վրա,
 - հաշվի առնելով համագործակցությունը, որը սկսվել է 2009թ. և այժմ էլ շարունակվում է ՀՀ Վայոց Ձորի մարզում սեյսմիկ կայանների փնջի տեղադրմամբ և սեյսմիկ ռեժիմի ուսումնասիրման ժամանակակից համակարգի ներդրմամբ,
 - հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում և Ֆրանսիայի Հանրապետության սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատմանը և սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների հույժ կարևորությունը, առաջնորդվելով երկու երկրների գերակայող օրենսդրությամբ, ինչպես նաև միջազգային համագործակցության քաղաքականությամբ և ընթացակարգերով,
- Կողմերը համաձայնեցին հետևյալի մասին՝

Հոդված 1

Ընդհանուր նպատակները

Համագործակցության ընդհանուր նպատակներն են՝

1) նպաստել.

- սեյսմիկ վտանգի գնահատմանը և ռիսկի նվազեցմանը երկու երկրներում,
- երկրաշարժի նախապատրաստման ամբողջ պրոցեսի ավելի լավ ըմբռնմանը,
- ուժեղ երկրաշարժի գործնական կանխատեսմանը՝ երկկողմ լրացնելով մոնիթորինգային տվյալների և գիտելիքների բազաները, զարգացնելով կանխատեսման տեխնոլոգիաները և մեթոդները,
- համապատասխան մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը,

2) ընդլայնել հետազոտողների և ճարտարագետների փոխանակման միջոցով հետազոտական կարողությունները սեյսմիկ մոնիթորինգի և կիրառական սեյսմոլոգիայի բնագավառում:

Հողված 2

Կողմերի համագործակցությունը

Կողմերը համաձայն են համագործակցել հետևյալ կետերի շուրջը՝

- 1) Սեյսմոլոգիական և ոլորտին առնչվող տեղեկատվության արագ փոխանակման կազմակերպում:
- 2) Երկրաշարժերի տվյալների բազայի փոխադարձ օգտագործում և ընդլայնում:
- 3) Սեյսմիկ տվյալների գրանցման, փոխանցման, մշակման և իրական ժամանակում վերլուծության ժամանակակից համակարգչային ծրագրերի կիրառում:
- 4) Փորձագետներին հնարավորության ընձեռում՝ ծանոթանալու սեյսմոլոգիական ցանցերի և տվյալների մշակման ու վերլուծման կենտրոնի աշխատանքներին:
- 5) Երկրաֆիզիկական, սեյսմատեկտոնական և հետերկրաշարժային ուսումնասիրություններից ստացված տեղեկատվության, գիտելիքների և մեթոդոլոգիաների փոխանակում:
- 6) Երկրաֆիզիկական և սեյսմոլոգիական հետազոտությունների արդյունքների օգտագործում համապատասխան տեխնիկական գործընթացների, հմտությունների և նորմատիվ փաստաթղթերի մշակման համար:
- 7) Սեյսմիկ վտանգի գնահատման, երկրաշարժերի կանխատեսման և սեյսմիկ ռիսկի նվազեցման կոնկրետ նախագծերի մշակում:
- 8) Մասնակցություն Եվրա-միջերկրական տարածաշրջանի երկրաֆիզիկական և սեյսմոլոգիական ծրագրերին:
- 9) Կապերի հաստատում և մասնակցություն Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության տարբեր ծրագրերին:
- 10) Երիտասարդ և խոստումնալից հետազոտողներին հնարավորության ընձեռում կատարելագործվելու ՖԱԷԿ ՇՄՎՎԴ լաբորատորիաներում:
- 11) Սեյսմոլոգիական տվյալների գրանցման, փոխանցման, մշակման և վերլուծման ժամանակակից մոտեցումների վերաբերյալ համաժողովների կազմակերպում:
- 12) Հայաստանի Հանրապետությունում ուժեղ երկրաշարժի դեպքում աջակցություն ֆրանսիական մասնագիտական թիմի աշխատանքներին:
- 13) Ատոմային օբյեկտների շուրջ վաղ ազդարարման համակարգերի ստեղծում:
- 14) Հայաստանի ազգային դիտացանցի արդիականացման և զարգացման, հատուկ և կարևոր օբյեկտների մոնիթորինգի և ակտիվ խզվածքների ուսումնասիրության նպատակով՝ սարքավորումների ներդրման համար առաջարկությունների մշակում:
- 15) Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնների ուսուցում բնակչության շրջանում:

Հողված 3

Տվյալների փոխանակումը և հրատարակումները

- 1) Փոխըմբռնման Հուշագրի շրջանակներում ձեռք բերված գիտական տվյալները և արդյունքները պետք է ժամանակին մատչելի լինեն Կողմերի մասնագետների համար:
- 2) Փոխըմբռնման Հուշագրի շրջանակներում համատեղ ջանքերով ձեռք բերված արդյունքները կարող են հրատարակվել ազգային և միջազգային ամսագրերում միայն Կողմերի համաձայնությամբ:

Հոդված 4 Համակարգումը

- 1) Փոխըմբռնման Հուշագրի ընդհանուր համակարգումը իրականացվում է այն ստորագրած կամ պաշտոնապես լիազորված անձերի կողմից, որոնք առնվազն տարին մեկ անգամ պետք է հանդիպեն Ֆրանսիայում կամ Հայաստանում քննարկելու Փոխըմբռնման Հուշագրի իրականացման ընթացքը և զեկուցելու կատարված աշխատանքների մասին:
- 2) Հայկական կողմից սույն Հուշագրի պատասխանատու կատարող է հանդես գալիս ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՀՀ ԱԻՆ ՍՊԱԾՄ ՊՈԱԿ):

Հոդված 5 Ֆինանսավորում

Կողմերը համատեղ կանեն հնարավորինս՝ հայթայթելու ֆինանսական միջոցներ Փոխըմբռնման Հուշագրում ամրագրված գործառույթների իրականացման համար ազգային և միջազգային կազմակերպություններից և դրամաշնորհ տրամադրող հիմնադրամներից:

Հոդված 6 Վեճերի հանգուցալուծում

Փոխըմբռնման Հուշագրի կիրառման կամ մեկնաբանման ընթացքում Կողմերի միջև ծագած վեճերը կլուծվեն փոխադարձ ընդունելի համաձայնությունների միջոցով:

Հոդված 7 Տևողությունը և լրացումները

Փոխըմբռնման Հուշագիրը գործողության մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 (հինգ) տարի ժամկետով:

Այն ինքնաբերաբար երկարաձգվում է նույն ժամանակահատվածով, եթե որևէ Կողմը առնվազն 6 (վեց) ամիս առաջ մինչև հաջորդ երկարացման ամսաթիվը գրավոր չի տեղեկացնում մյուս Կողմին նրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Փոխըմբռնման Հուշագիրը կարող է լրացվել կամ ձևափոխվել ցանկացած պահին Կողմերի գրավոր համաձայնության պարագայում:

Կոնկրետ նախագծեր կարձանագրվեն առանձին պայմանագրերում, որոնք կհանդիսանան սույն Փոխըմբռնման Հուշագրի անբաժանելի մասը:

Ստորագրված է Փարիզում 15 դեկտեմբերի 2011թ., հայերեն և ֆրանսերեն երկուական բնագիր օրինակներով, ընդ որում երկուսն էլ հավասարազոր են:

ՀՀ ԱԻՆ ՍՊԱԾ-ի կողմից
ՀՐԱԶՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ, պետ



ՖԱԷԿ ՇՄՎԿԴ կողմից
ԲՐՈՒՆՈ ՖԵՅՆԵՐ, պետ

